ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Արմենի Ղազանչյանի «Անձի իրավական դրության հիմնախնդիրները. սահմանադրաիրավական հետազոտություն» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

Լիլիթ Արմենի Ղազանչյանի «Անձի իրավական դրության հիմնախնդիրները. սահմանադրաիրավական հետազոտություն» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է անձի իրավական դրության ինստիտուտին առնչվող այն հարցադրումների համալիր ուսումնասիրությանը, որոնք ունեն ընդգծված արդիական արժեք: Մասնավորապես, էական նշանակություն են ձեռք բերել տարբեր իրավունքի ճյուղերում անձի իրավական դրության դրսևորումներին, սկզբունքներին և առանձնահատկություններին վերաբերող հիմնախնդիրները, որոնց համալիր հետազոտությունը հնարավորություն է տվել հարստացնելու սահմանադրական իրավունքի տեսությունը կոնկրետ իրավունքի ճյուղերի և ինստիտուտների համատեքստում անձի իրավական դրության առնչությամբ տեսական դիրքորոշումները, առավել կանխատեսելի դարձնելու իրավական կարգավորումները, իրավաստեղծ գործունեությունը և այլն:

Արդիականությունը համարժեք է ներկայացված նաև հեղինակի կողմից: Մասնավորապես, հեղինակը նկատել է, որ. «Ընդհանրապես, անձի իրավական դրության ապահովման հիմնախնդիրը հանդիսանում է, ինչպես ընդհանուր իրավագիտության, այնպես էլ ճյուղային՝ սահմանադրական իրավունքի գիտության խնդրահարույց հարցերից մեկը: Հետևաբար, անձի իրավական դրության համալիր և համակարգված գիտական ուսումնասիրությունը խիստ արդիական է ներկայանում

հատկապես արդի հայ հասարակության և պետության զարգացման տեսանկյունից: Այս առումով անհրաժեշտ է արձանագրել, որ անձի իրավական դրության հիմնախնդիրների համակողմանի սահմանադրաիրավական վերլուծությունը, հնարավորություն է ընձեռում գտնել նոր լուծումներ անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և անձի իրավական դրության այլ կառուցվածքային տարրերի արդյունավետ պաշտպանության և իրացման գործընթացում»:

Աշխատանքը պատրաստված է գիտական անհրաժեշտ բարեխղճությամբ, այն դոկտորական թեզին վայել ինքնուրույն հետազոտության արդյունք է, ինչն ուղեկցվել է ինքնատիպ եզրահանգումներով: Ատենախոսությունում չկան այլոց մտքերն ու դատողությունները, միջազգային զեկույցներում կամ այլ գիտագործնական աղբյուրներում արտացոլված մոտեցումները որևէ կերպ յուրացնելու փաստեր: Նյութը շարադրված է հստակ գիտական ու տարընթերցումների տեղիք չտվող ակադեմիական լեզվաոճով: Այլ գիտնականների տեսակետերը վերլուծելիս, այդ թվում՝ դրանց հետ չհամաձայնվելու դեպքերում, հեղինակը դրսևորել է պատշաճ գիտական բարեվարքություն:

Աշխատանքի ձևավորումը ամբողջովին համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Ընդհանուր առմամբ ապահովված է պաշտպանության ներկայացվող դրույթների ինքնատիպությունը ինչպես բովանդակային, այնպես էլ դրանց շարադրանքի կտրվածքով: Ընդ որում, բոլոր դրույթները ոչ միայն առանձնանում են անհրաժեշտ պահանջվող հստակությամբ, այլև ներքին համակարգային կապով:

Գիտական նորույթի և մարդու իրավունքների մասով սահմանադրական իրավունքի տեսությունը զարգացնելու տեսանկյունից արժեքավոր են, հատկապես՝ «մարդու իրավական դրություն» և «մարդու իրավական վիճակ» հասկացությունների բնորոշումների առնչությամբ հեղինակի դիտարկումները, որոնք հնարավորություն են տալիս առանձնացնելու հիշյալ հասկացությունների ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ բնորոշիչները: Արժեքավոր են նաև հեղինակի եզրահանգումները՝ կապված հասարակություն-պետություն փոխհարաբերության համատեքստում մարդու

իրավական դրությունը կանխորոշելու կտրվածքով իրավունքի հիմնարար սկզբունքների նշանակության վերաբերյալ: Ըստ էության, թեզի եզրահանգումները կարևորվում են նաև այն ասպեկտով, որ հնարավորություն են տալիս ուրվագծելու կոնկրետ պետության քաղաքացու իրավունքների, ազատությունների և պարտականությունների հստակ ծավալը՝ կախված իր կողմից առաջադրված իրավաքաղաքական գործոններից:

Հետազոտության համար ընտրվել են մեծ ծավալի և շրջանակի գրականության աղբյուրներ, նորմատիվ փաստաթղթեր, իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութեր ու այլ անհրաժեշտ իրավական փաստաթղթեր, այդ թվում, միջազգային հեղինակավոր փորձագիտական կառույցների եզրակացությունները, բանաձևերը և այլն:

Աշխատության կառուցվածքի առնչությամբ գտնում ենք, որ հեղինակն ընտրել է հիմնավորված ու տրամաբանական կառուցվածք, ինչը հնարավորություն է տվել խելամիտ ներքին տրամաբանության հենքով կառուցելու ենթահարցերի ընտրությունը և դրանց հետազոտությունը: Թերևս, նշված կառուցվածքն ընտրելիս, հեղինակը գործել է հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդաբանությամբ, քանզի ոչ միայն բխեցրել է եզրահանգումներ, այլև փորձել է դրանք ներկայացնել որոշակի հանդիպակաց ուսումնասիրությամբ: Հարկ է հավելել, որ աշխատանքի կառուցվածքը, ինչպես և թեմային առնչվող հարցադրումների, դրանց շարադրանքի ընտրությունը անթաքույց առանձնանում են զգալի ինքնատիպությամբ:

Ընդ որում, հեղինակը անձի իրավական դրությունը, նախ, քննարկել է որպես սահմանադրաիրավական գիտակարգ, բացահայտել է անձի իրավական դրության հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան, այնուհետև անդրադարձել է նույն հարցադրումների համակարգային ամբողջականության բաղադրիչների դրսևորման առանձնահատկություններին, իրավակարգավորման ոլորտում դրանց դրսևորման սկզբունքներին և անձի իրավական դրության սոցիալ-իրավական երաշխիքների համակարգին, ինչպես նաև կատարելագործման հիմնախնդիրներին:

Հեղինակը արձանագրել է քննարկվող ոլորտներում առկա իրավակարգավորումների էական խնդիրները, դրանց առնչվող իրավական

հարցադրումները ուսումնասիրության առարկա է դարձրել առկա իրավակարգավորումների կատարելագործման համատեքստում՝ միջազգային չափանիշների հաշվառմամբ և ըստ այդմ՝ բանաձևել է դրանց վերաբերյալ սեփական դիտանկյունից ընդունելի համարժեք լուծումները: Կարծում ենք, արժեքավոր են հեղինակի դիտարկումները նաև Սահմանադրությանն առնչվող փոփոխությունների և լրացումների առաջարկությունների մասով, հատկապես 81.1. հոդվածով լրացնելու կտրվածքով:

Ատենախոսությունը, դրական գնահատելով հանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այն զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները հնարավորինս համակարգված ներկայացնում ենք ստորև.

1. Անձի իրավական դրության սահմանադրաիրավական բնորոշման համատեքստում հեղինակը առաջարկել է Սահմանադրությունը լրացնել 81.1. հոդվածով, որի երկրորդ մասով նախատեսվում է ամրագրել, որ «սույն գլխի դրույթները հանդիսանում են Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական դրության հիմքը և ենթակա չեն փոփոխման այլ կարգով, քան հանրաքվեի միջոցով»: Կարծում ենք, հեղինակին հարկ էր ուշադրություն դարձնել, որ 2015թ. Սահմանադրության փոփոխությունների 202-րդ հոդվածի 1-ին մասով միանշանակ առանձնացված են Սահմանադրության այն գլուխներն ու հոդվածները, որոնցում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Ընդ որում, «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլուխն արդեն իսկ ամբողջովին ներառված է հիշյալ ցանկում:

Հեղինակը նշված հոդվածում նախապատվությունը տալով «փաստացի վիճակ» եզրույթին, ըստ էության, ելակետ է ընդունել այն թեզը, ըստ որի՝ անձի իրավական դրության համատեքստում վճռորոշը փաստական բաղադրիչն է: Չվիճարկելով հեղինակային այս դիրքորոշումը, հարկ ենք համարում նկատել, որ այս դիտարկումը, թերևս, բավարար չափով ներդաշնակ չէ անձի իրավական կարգավիճակի համադրման կտրվածքով հեղինակի այն եզրահանգման հետ, ըստ որի՝ «Թեպետ, ժամանակակից իրավաբանական գրականությունում այդ երկու հասկացությունները հաճախ

նույնականացվում են, սակայն, հեղինակի կատարած համապարփակ ուսումնասիրությունները վկայում են, որ «անձի իրավական դրույթունը» ավելի լայն և ընդգրկուն հասկացություն է, որը ներառում է իրավահարաբերության սուբյեկտին բնորոշ բոլոր երևույթները, իսկ վերջինիս հիմքում բոլոր տարրերի հետ մեկտեղ, ընկած է «անձի իրավական կարգավիճակ» հասկացությունը»: Այսպիսով, եթե ելակետ ենք ընդունում, որ անձի իրավական դրությունը ներառում է նաև իրավական կարգավիճակի տարրեր, ապա այն սոսկ փաստացի վիճակ ներկայացնելը ակամա դառնում է խնդրահարույց:

2. Նախորդ դիտարկման համատեքստում կարևորվում է նաև մեկ այլ հարցադրում: Եթե անձի իրավական դրությունը բնորոշում ենք որպես «փաստացի վիճակ», ապա հարց է ծագում, թե այդ փաստական վիճակն ինչպիսի բաղադրիչներ է ներառում, արդյո՞ք կարող է ներառել նաև այնպիսի բաղադրիչներ, որոնք առանձին վերցրած անձի իրավական դրության տարրեր չեն, սակայն իրենց ամբողջության մեջ, թերևս, չեն կարող տարանջատվել անձի իրավական դրության հիմնական բաղադրիչներից: Այսպես, օրինակ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման օրենսդրական հիմքերի իրավաչափության առնչությամբ՝ կապված այն հարցադրման հետ, թե արդյո՞ք այդպիսիք համարվում են անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական դրույթներ, Սահմանադրական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումներից բխում է, որ դրանք երբևէ չեն եղել հայրենական օրենսդրության համակարգում, ուստի անմիջապես չէին կարող հանգեցնել արդեն իսկ հաստատված անձի իրավական կարգավիճակի, հետևապես՝ նաև անձի իրավական դրության վատթարացմանը: Այսինքն՝ միանգամայն նոր իրավական կարգավորումները ոչ թե վատթարացնում են արդեն իսկ կարգավորված անձի իրավական դրությունը, այլ սահմանում են նոր իրավական դրություն: Տվյալ դեպքում, մեր կարծիքով, անտեսվել է, որ անձի սեփականության իրավունքը ամբողջական իրավական ինստիտուտ է, ուստի որևէ կերպ այդ իրավունքը սահմանափակող օրենսդրական նորամուծությունը չի կարող դիտարկվել իբրև բացարձակ մեկուսի, տվյալ ստատիկ վիճակում անձի իրավական դրության վրա ազդեցություն չունեցող երևույթ՝ սոսկ այն պատճառաբանությամբ, որ

նախկինում օրենսդրության համակարգում ուղղակի չեն եղել համանման ինստիտուտներ:

Այս հարցադրման առնչությամբ հեղինակի եզրհանգումներից, թերևս, բխում է, որ նաև ևս չի կարող սկզբունքորեն համամիտ լինել այսպիսի մոտեցման հետ, սակայն, կարծում ենք, հարկ էր անձի իրավական դրության բաղադրիչներին անդրադառնալիս, քննարկել և ամբողջական ու հստակ տեսքի բերել նաև հիշյալ հարցադրումների առնչությամբ մոտեցումները:

3. Արժեքավոր համարելով հանդերձ հեղինակի այն եզրահանգումը, որ «արժանապատվությունը» սահմանադրաիրավական արժեքով, ըստ էության, ընդգրկում է նաև այդ ինստիտուտի սոցիալական ասպեկտները, հատկապես՝ «արժանապատիվ կյանք» հասկացությունը, այնուամենայնիվ, խնդրահարույց ենք համարում այս հարցի առնչությամբ հեղինակի մյուս մոտեցումները: Այսպես, շարունակելով իր միտքը, հեղինակը նկատել է՝ «Իրենց հերթին, «արժանապատվություն» և «արժանապատիվ կյանք» հասկացությունները, որպես սոցիալական երևույթ, նախասահմանում են «անձի արժանապատվություն» սահմանադրական կատեգորիայի բովանդակային ամբողջականությունը, նպաստելով ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունում անձի իրավական դրության իրացմանը»: Ինչ խոսք, նաև Հայաստանի Սահմանադրությունն է Հայաստանի Հանրապետությունը հռչակել որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Խնդիրն այն է, որ չափազանց բարդ ու հակասական է պետությունը միաժամանակ որակել և որպես իրավական և որպես սոցիալական, և թերևս, դա է հիմնական խնդիրը, որ ժողովրդավարության հարուստ փորձ ունեցող երկրներում խուսափում են, այն էլ սահմանադրական մակարդակով պետությունը միաժամանկ հռչակել և իրավական և սոցիալական: Հայաստանի պարագայում հայրենական սահմանադրագիտության համատեքստում, ցավոք, անկախության սկզբնական շրջափուլում «սոցիալական պետությունը» անհարկի նույնացվել է «սոցիալական քաղաքականություն ստանձնելու պատրաստ պետության» հետ, ուստի առանձնակի խնդիր չի համարվել տարբեր երկրների

սահմանադրություններից այդ երկու իրարարմերժ հատկանիշների համատեղումը: Իրավական պետության պարագայում իրավահավասարությունը բացարձակ արժեք է, այն չի կարող խաթարվել, օրինակ՝ որոշակի սոցիալական թույլ պաշտպանված խավերին ավելի լայն իրավունքներ ամրագրելով, պարզապես փաստացի անհավասարությունը հարկ է հաղթահարել հանրային միջոցների հաշվին նպատակային սոցիալական նպաստների և նմանաբնույթ այլ սոցիալական աջակցության քաղաքականության միջոցով, մինչդեռ՝ սոցիալական պետության պարագայում՝ պետությունը ձեռք է բերում իրավահավասարությունից շեղվելու որոշակի հնարավորություն: Այսպես, իրենց սոցիալական հռչակած երկրներում գերշահույթ ապահովող ձեռնարկատիրության մի շարք տեսակներով, օրինակ՝ վիճակախաղերի կազմակերպում, տարադրամի փոխանակում, սպիրտային խմիչքների, ծխախոտի վաճառքի կազմակերպում և այլն՝ կարող են զբաղվել բացառապես հաշմանդամների մավորումների հիմնած իրավաբանական անձինք և այլն: Իսկ այսպիսի կարգավորումն աղերսներ ունի իրավական պետության հետ:

Ասվածի համատեքստում, կարծում ենք, հեղինակին հարկ էր հետազոտությամբ անդրադառնալ այն հիմնահարցին, թե ինչպիսի վերապահումներով է հնարավոր կանոնակարգել մարդու իրավունքների դրությունը, այդ թվում՝ յուրաքանչյուր մարդու արժանապատիվ կյանքը՝ իրավական և սոցիալական պետության համադրման պարագայում:

4. Անդրադառնալով անձի իրավական դրության իրավական երաշխիքներին, հեղինակն իրավամբ առանձնացրել է նաև դրանց գիտագործնական նշանակությանը՝ միջազգային վերպետական կառույցների համակարգում: Ըստ էության, այս համատեքստում հեղինակի դիրքորոշումների հետ ընդհանուր առմամբ համամիտ լինելով հանդերձ, կարծում ենք, հաշվի առնելով ընտրված թեմայի ասպեկտները, հարկ էր Սահմանադրության 81-րդ հոդվածի հենքով հետազոտել ներկայումս խիստ արդիականություն ձեռք բերած միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի տեսահրավական հարցադրումները: Մասնավորապես, անձի իրավական դրության ապահովման կտրվածքով վերպետական միջազգային

կազմակերպությունների իրավական դիրքորոշումների առնչությամբ հետազոտությունները, մեր կարծիքով, կարող են ամբողջական լինել, եթե այդ հարցերը քննարկվում են համալիր՝ ներառելով նաև ներկայումս խիստ խնդրահարույց այնպիսի հարցեր, ինչիպիսք են՝ ա) ի՞նչ իրավական բովանդակություն ունի «հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագված դրույթները մեկնաբանելիս *հաշվի է առնվում*» իրավանորմը, բ) Սահմանադրության 81-րդ հոդվածի իմաստով կարո՞ղ են միջազգային կազմակերպություններ համարվել նաև միջազգային խորհրդատվական, փորձագիտական կառույցները, գ) միջազգային մարմինների «պրակտիկան» ի՞նչ չափով է ներառում խորհրդատվական արժեք ունեցող դիրքորոշումները և դ) ՄԻԵԴ-ի խորհրդատվական որոշումները, որոնք արդեն տևական ժամանակ է, ինչ կիրառման մեջ են դրվել, ինչ չափով են առնչվում անձի իրավական դրության ապահովման ինստիտուտի հետ:

Ատենախոսության հիմնական դրույթները համարժեք արտացոլված են հեղինակի թվով 5 մենագրություններում և 73 գիտական հոդվածներում, որոնք բոլորն էլ հրատարակվել են ընդունելի հայրենական և միջազգային գիտական հանդեսներում:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ հիշյալ դիտարկումներն ու նկատառումները, գտնում ենք, որ հեղինակը կատարել է ծավալուն և արդյունավետ աշխատանք, այն աչքի է ընկնում ինքնուրույնությամբ և պահանջվող աստիճանի ինքնատիպությամբ:

Նկատենք, որ վերը նշված նկատառումները էապես չեն կարող ազդել դոկտորական ատենախոսության ընդհանուր արժեքի վրա, դրանք առավելապես գիտական բանավեճի համատեքստում են, ուստի Լիլիթ Արմենի Ղազանչյանի «Անձի իրավական դրության հիմնախնդիրները. սահմանադրաիրավական հետազոտություն» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է Կառավարության 1997 թվականի

օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, ուստի հեղինակին, Լիլիթ Արմենի Ղազանչյանին, կարող է շնորհվել ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

«2» հունիսի 2026 թվական

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ **ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

« 1 » հունիսի 2026 թվական